ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2022 թվականի N 1347 - Ա

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 954-րդ հոդվածով, ինչպես նաև առաջնորդվելով թվային հասարակության և տնտեսության ձևավորման բարեփոխումների շրջանակներում Հայաստանում տեղեկատվական համակարգերի բնագավառի ինստիտուցիոնալ կառավարման կառուցակարգերի արդիականացման նպատակով և այդ գործընթացի շրջանակներում, որպես համակարգի օղակ, Հայաստանի Հանրապետությանը պատկանող «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման շարունակականությունն ապահովելու անհրաժեշտությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 100 (հարյուր) տոկոս բաժնետոմսերով հավաստված

իրավունքները հանձնել «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի կողմից որպես հատուկ նշանակության գործիք ստեղծված «Տեղեկատվական համակարգերի հատուկ նշանակության գործիք» փակ բաժնետիրական ընկերության հավատարմագրային կառավարմանը:

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի և «Տեղեկատվական համակարգերի հատուկ նշանակության գործիք» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ հավատարմագրային կառավարիչ) միջև կնքվող «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման մասին պայմանագրի նախագծին՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝ Հայաստանի Հանրապետության անունից կնքել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման մասին պայմանագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ